ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/5» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

21.05.2018թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության պետի տեղակալ, գնդապետ Տ. Մաթևոսյան (ԳԱՊ),
ՀՀ ՁՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ Խ. Երիցյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ՀՕՊ, ՌԷՊ, կապի և ավիացիոն միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ռ. Զադոյան,
ՀՀ ՊՆ ՌՈ ՀՕԾ բաժնի ավագ սպա, մայոր Հ. Բարսեղյան:
Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա.Ամիրյան:

Բացակայում է ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/5» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Ամիրյան)

1. Մասնակիցների՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում, հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագրի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում, հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագրի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Ամիրյան)

1.1 «Կոմպասս» ՍՊԸ-ի, «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի «Միկրորինգ» ՍՊԸ-ի կողմից հայտով առաջարկված ապրանքների (ապրանքների) ամբողջական նկարագրերը առկա են և գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերի պահանջներին բավարարող:

«ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային ստորագրությամբ:

«Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ի կողմից հայտով առաջարկված՝ 15-րդ չափաբաժնում ընդգրկված ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացվել է կամ համարժեք արտահայտությամբ, կոնկրետ նշված չէ թե ինչ է առաջարկվում: Անհրաժեշտ է հստակ ներկայացնել ապրանքի տեխնիկական բնութագիր:

«Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված N 6-ում նշված է այլ ընթացակարգի ծածկագիր:

«ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ-ի կողմից հայտով առաջարկված՝ 16-րդ, 41-րդ, 54-րդ, 57-րդ չափաբաժիններում ընդգրկված ապրանքների ամբողջական նկարագրերը ներկայացվել են կամ համարժեք արտահայտությամբ,

կոնկրետ նշված չէ թե ինչ է առաջարկվում: Անհրաժեշտ է հստակ ներկայացնել ապրանքների տեխնիկական բնութագրերը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, հանձնաժողովը՝ 21.05.2018թ. որոշեց, մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

23.05.2018թ. գնահատող հանձնաժողովը շարունակեց նիստը: Բոլոր մասնակիցները սահմանված ժամկետում ներկայացրել են պահանջվող շտկումները, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխանող:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված եզրակացության համաձայն «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն, «Միկրորինգ» ՍՊԸ-ն, «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն, «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն, «ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն: Նույն եզրակացության համաձայն «Կոմպասս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է 1 866 258 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություն և «ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ն՝ 17 270 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություն: Հաշվի առնելով վերը նշված եզրակացությունը գնահատող հանձնաժողովը 23.05.2018թ. որոշեց մերժել «Կոմպասս» ՍՊԸ-ի և «ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի հայտերը:

«Կոմպասս» ՍՊԸ-ի հայտը մերժելու արդյունքում, ներկայացված գնային առաջարկի հիման վրա՝ 3-րդ, 4-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ չափաբաժինների մասով, գնահատող հանձնաժողովի որոշմամբ, 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ-ն, իսկ 14-րդ չափաբաժնի մասով՝ «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն:

«ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի հայտը մերժելու արդյունքում, ներկայացված գնային առաջարկի հիման վրա՝ 42-րդ, 43-րդ, 44-րդ, 45-րդ, 47-րդ, 49-րդ, 50-րդ, 51-րդ չափաբաժինների մասով, գնահատող հանձնաժողովի որոշմամբ, 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ-ն:

1.2 Հանձնաժողովը որոշեց առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերը:

Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում չներկայացնել, քանի որ «ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ-ն և «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն, սույն ընթացակարգի շրջանակներում, այլ չափաբաժիններով ճանաչվել էին 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցներ և համաձայն եզրակացության, մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:

1.3 23.05.2018թ., հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի, «Միկրորինգ» ՍՊԸ-ի, «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ի (10-րդ, 11-րդ, 15-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 55-րդ չափաբաժիններում), «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի, «ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ-ի (1-ին, 2-րդ, 8-րդ, 16-րդ, 29-րդ, 33-րդ, 36-րդ, 38-րդ, 39-րդ, 41-րդ, 54-րդ, 56-րդ, 57-րդ չափաբաժիններում) որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/5» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ և անգործության ժամկետի ավարտից հետո, մասնակիցներին պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.4 Ընթացակարգը 48-րդ չափաբաժնի մասով չկայացավ, քանի որ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/5» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել ոչ ուշ քան, 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Ս. Մաթևոսյան
Գնահատող	Խ. Երիցյան
Գնահատող	Ռ. Զադոյան
Գնահատող	Հ. Բարսեղյան
Գնումների համակարգող՝	Ա. Ամիրյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/5» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

29.05.2018թ.
ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության պետի տեղակալ, գնդապետ Տ. Մաթևոսյան (ԳԱՊ),
ՀՀ ՋՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ Խ. Երիցյան,
ՀՀ ՊՆ ՌՌ ՀՕԾ բաժնի ավագ սպա, մայոր Հ. Բարսեղյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան:
Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա.Ամիրյան:

Բացակայում է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ՀՕՊ, ՌԷՊ, կապի և ավիացիոն միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ռ. Զադոյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/5» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Ամիրյան)

1. «Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված լրացուցիչ տեղեկատվությունը քննարկելու մասին.
2. «ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված լրացուցիչ տեղեկատվությունը քննարկելու մասին.
3. Մասնակիցների՝ հայտերով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերը և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. «Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված լրացուցիչ տեղեկատվությունը քննարկելու մասին.

(Ա. Ամիրյան)

29.05.2018թ. «Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է տեղեկանք՝ տրված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեյի կողմից: Գնահատող հանձնաժողովը քննարկելով այն, արձանագրեց, որ «Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են լրացուցիչ տվյալներ՝ ժամկետանց հարկային պարտավորությունների բացակայության վերաբերյալ և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, որոշեց Մասնակցի տվյալները չներկայացնել լիազորված մարմին:

2. «ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված լրացուցիչ տեղեկատվությունը քննարկելու մասին.

(Ա. Ամիրյան)

29.05.2018թ. «ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է տեղեկանք՝ տրված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեյի կողմից: Գնահատող հանձնաժողովը քննարկելով այն, արձանագրեց, որ «ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են լրացուցիչ տվյալներ՝ ժամկետանց հարկային պարտավորությունների բացակայության վերաբերյալ և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, որոշեց Մասնակցի տվյալները չներկայացնել լիազորված մարմին:

3. Մասնակիցների՝ հայտերով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերը և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Ա. Ամիրյան)

3.1 «ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ-ն և «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն հայտով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերը ներկայացրել են և դրանք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխանող:

3.2 Որակավորման հայտերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 30.05.2018թ., հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ-ի (3-րդ, 4-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 42-րդ, 43-րդ, 44-րդ, 45-րդ, 47-րդ, 49-րդ, 50-րդ, 51-րդ չափաբաժինների մասով) և «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ի (14-րդ չափաբաժնի մասով) որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/5» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ՝ նաև վերը նշված չափաբաժինների մասով և անգործության ժամկետի ավարտից հետո մասնակիցներին պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել:

3.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/5» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/5» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել ոչ ուշ քան գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Տ. Մաթևոսյան
Գնահատող	Խ. Երիցյան
Գնահատող	Հ. Բարսեղյան
Գնահատող	Կ. Բրուտյան
Գնումների համակարգող՝	Ա. Ամիրյան